

ԴԱՏԱՔՆՆՈՒԹԻՒՆ (1)

Ախորժ հաճութեամբ կարդումի 1862 ամի մայիս ամսոյ Կոստնի օրացիքը. եւ երբ հասաւ Պ. Սիմեոնեանցի յօդուածը՝ որ գրած էր հաւատոյ, յոյսոյ եւ սիրոյ վերայ, ինարկէ առարկայն էր աստուածաբանական, վասն որոյ առաւել զարձուցի դէպ ի նա իմ ուշադրութիւնը. բայց շատ ցաւեցայ որ այն պատուական նիւրը ընկած տեսայ մէկ խոր եւ խառնափնդոր անդնդապտոյտ լարիւրներու մէջ:

Պարոնի յօդուածոյ մէջը պարունակվում է թէ „Աշխարհը երբեմն հրով, երբեմն ջրով եւ երբեմն սասանութեամբ տատանվում էր. սորա վերայ աւելացաւ մարդկային կիրքը եւ բռնացաւ Աստուծոյ արարածոց վերայ. սորանից հետեւեցան տարապայման երկպառակութիւնք, հալածանք, մատնութիւնք, եւ այլ զանազան սարսափելի վնասք: Հասարակութեան նախագահ Անձինքը, որոց պարտականութիւն էր կապել նորա անդամներին միմեանց հետ սիրով, ջանադիր էին երկպառակութիւն քցել. նա մանաւանդ այս ջարտութեանց առաւել ձեռնամուխ էին լինում այնպիսի անձինք՝ որոց զործը պէտք է լինէր ըստ պաշտօնի իւրեանց հոգեւոր եւ բարոյական բարութիւնը եւ լատութիւնը մարդոց. ո՞ն, զարնուրելի է այն անձանց վիճակը՝ որոնք հեղուքեան, խոնարհութեան, բարութեան եւ սրբութեան զգեստների տակը կրում էին այնքան ջարտութեան բռնով լիքը անօրներ... Վերջապէս, ասէ, ողորմեցաւ Տէր աշխարհի, եւ այնպիսի անձինքը հեռացրեց մէկը հարաւ, մէկը հիւսիս, եւ միւսը մահու մատնեց որ նոքա զնան իւրեանց անցնալ միջքերն ապաշտան. լիտոյ առաքեց երկնքիցն երեք հրեշտակ՝ որք են հաւատ, յոյս եւ սէրը. նոքա եկան իւրեանց պայմաններն կատարեցին, ինարկէ բարձին բոլոր երկպառակութիւնը եւ սերմանեցին խաղաղութիւնը, ու երբ կամեցան դառնալ երկինքը, Աստուած ձայն տուեց թէ Մնացէք դուք այստե՛ստեւ մարդկանց մէջը, որ նոքա հաւատոյ՝ յուսան եւ սիրեն. ու իրօք կատարուեցան, ու ամենայն բանը իւր նպատակին հասաւ, այնուհետեւ վերջացաւ բոլոր երկպառակութիւնը“:

Անձերքը այլաբանութիւն... Այս գրութիւնիցը յայտնի երեւում է որ հաւատը, յոյսը եւ սէրը զալուց լիտոյ վերացաւ իսպառ երկպառակութիւնը, ու այստե՛ստեւ չբարձր լինի յաւիտեան, որովհետեւ նոքա մնացին մարդկանց միջին՝ հրամանաւն Աստուծոյ: Բայց շատ ցաւալի է որ Պ. Սիմեոնեանցն նոցա զալու ժամանակը չի նշանակում. վասն զի պատմութիւնը առանց ժամանակագրութեան կոյր է բոլորովին. նա մանաւանդ երէ գիտացած լինէինք հաւատոյ՝ յոյսոյ եւ սիրոյ զալու ժամանակն, նորանցից առաջ եւ լիտոյ պատահմունքներն կրաղղատեինք միմեանց հետ, եւ Պ. Սիմեոնեանցին յօդուածոց իսկութեանը քաջ վերահասու կլինէինք. ինչ եւ իցէ մենք նոր մէկ բաղդատութիւն անենք եւ բանի որպիսութիւնը հասկանանք:

Ինարկէ հաւատը, յոյսը եւ սէրը կամ մարդկութեան հետ ծնած պիտի լինին եւ կամ այս 1862 ամի մայիս ամսին եկած են. երէ այս մայիս ամսին են եկած, ուրեմն սուրբ

Նախնիքն՝ այսինքն Աղամը, Արեւը, Սէրը, Ենովքը, Ենովքը, Նոյը, Մեղքիսեղեկը, Արրահամը, Խահակը, Յակոբը եւ բոլոր մարգարէք չունէին ոչ հաւատ, ոչ յոյս, ոչ սէր. ենպէս էլ Քրիստոսից լիտոյ ոչ Առաքեալքը, ոչ մարտիրոսքը, ոչ նահատակները, եւ ոչ մեր յաւիտեանական յիշատակաց արժանի Լուսաւորիքը, նորա որդիքը եւ բռնուքը, եւ ոչ նոցա յաջորդող սուրբ Հայրապետները, կամ սուրբ Վարդանը՝ չունէին ոչ հաւատ, ոչ յոյս եւ ոչ սէր: Ապրի Սիմեոնեանցը, լա՛ւ զարգարեց... Իսկ երէ ասէ թէ նոքա վաղուց եկած են, ուրեմն սուտ է Սիմեոնեանցն: Ամենայն ժամանակ եղել է երկպառակութիւն, խռովութիւն, տարաձայնութիւն ու մատնութիւն, բէւ մինն հիւսիս, մինն հարաւ ու միւսն մահու մատնուած լինին. ու ոչ թէ երեք հրեշտակք, այլ թէ ըլիւր եւս հրեշտակք երկնքից եկած լինէին, ոչինչ չէին կարող առնել: Խեղճ Սիմեոնեանց. երէ հրեշտակաց Տէրը երկնքից եկած՝ իրան լուսաւոր եւ աստուածային վարդապետութիւնովը կաշտասէր՝ ընչաքաղց՝ ինքնահաւան՝ խարդալս ու խարերայ կեղծաւորների միջից երկպառակութիւնը՝ տարաձայնութիւնն ու խռովութիւնը չի կարաց մերժի, ապա ողորմելի հրեշտակները ինչպէս կարացին իսպառ բառնալ, ինչպէս դու եւ երազում...:

Հիմա զանք են խօսքերի վերայ թէ „Իւրեանց սրբազան զգեստների տակը բռնով լի անօրներ են պահում, որով եւ երկպառակութիւն՝ տարաձայնութիւն են աւելացնում. ուրեմն երէ այնպէս հոգեւորականներն լինին որ սրբազան զգեստների տակը սրբութեամբ լի անօրներ պահեն, աշխարհիս մէջը երբեք չպիտի լինի խռովութիւն եւ երկպառակութիւն, այլ ընդ հակառակն խաղաղութիւն, խնդութիւն ու երջանիկ միաբանութիւն“:

Այս բանին մէջ Պ. Սիմեոնեանցն երէ չի հաւատաց որ հաւատը, յոյսը եւ սէրը Աղամիցն է սկսուած, զոնէ Ենովքիցը մինչեւ Մովսէս չի կարող ուրանալ. վասն զի Ենովքի համար գրուած է „Սո՛ւ յուսացաւ կոչել զանուն Աստուծոյ: Արրահամ հաւատաց յԱստուած եւ համարեցաւ նմա յարգարութիւն“:

Իսկ Մովսէսի ժամանակը բնական օրէնքի սերը դրոշմեցաւ Աստուծոյ մատման քարէ տախտակի վերայ: Ուրեմն մինչեւ Մովսէսը հաւատը, յոյսը եւ սէրը եկած էին յաշխարհ: Պ. Սիմեոնեանցի խօսքի զօրութիւնի վերայ հիմի հարկաւոր ենք համարում խնդրել Պ. Սիմեոնեանցից՝ թէ Մովսէսը Աստուծոյ ընտիր մարգարէն էր եւ Հոգւով սրբով լցուած. արդեօք նորա սուրբ զգեստների տակը ջարտութեամբ լիքը անօրներ են պահուած թէ բարութեամբ: Ինարկէ կասի „բարութեամբ“: — Ապա ինչո՞ւ չկարաց խստապարանոց խարայելին համոզի, եւ նոցա միջիցը երկպառակութիւնը բառնալ. ինչո՞ւ չկարաց Կորնիսն, Գաբրիէն եւ Աբիրոնին դարձնի իւրեանց յամառ ու ընչաքաղց կամքիցը: Անարուն սուրբ քահանայապետը ինչո՞ւ չկարաց համոզի Խարայելի ազգին, որ քարով ու զով արձակեցան նորա վերայ, ու փոխանակ Աստուծոյ՝ որը շինել տուին եւ պաշտեցին: Հեղին ինչո՞ւ չկարաց իւր որդւոցը համոզի առ բարին: Մարգարէքը ինչո՞ւ չկարացին աստուածային սուրբ պատգամը կամակոր Խարայելի անլուր ականջացը հաճոյական առնել. այլ ընդ հակառակն համոզանքից եւ խրատներից զրգուած՝ եսայի մարգարէին սղոցեցին, երեմիային գուրն իջուցին, Միքայիլին բանտարկեցին, Եզեկիելին ձիւն ագոփց կապելով՝ դաշտի մէջը սպանեցին, ու միւսներին էլ այլպէս աւարին. ինչպէս Քրիստոսը ողորմով ասում է „Երուսաղեմ Երուսաղեմ, որ կոտորես զմարգարէս եւ քարկոծ առնես

(1) Այս դատաքննութիւնը, ինչպէս որ յոճոյն եւ յիմաստիցն եւս յայտնի է, Կովկասեան Նահանգէն յուղարկուած է միջ որ Հրատարակեմք. եւ թէպէտ տեղական Հանգամանաց Հմտութիւն չունեցողը պարզ չհասկնար սորա խօսքերուն զօրութիւնը, բայց մեք Հարկ չհամարեցանք վէճին մէջ մտնել, եւ ոչ բացատրութիւն մը աւելցնել:

զառաքեալսն առ քեզ . քանիցս անգամ կամեցայ ժողովել . . . եւ կամ քե . 28 ոք իմարգարեից ոչ հալածեցին հարքն ձեր :

Այժմ, Պ. Սիմեոնեանց, կարծեմ քե սոքա հարաւ հիւսիս զնացող մեղաւոր մարդիկը չէին, եւ սրբազան զգեստի տակը բռնով լիքը անօրներ չունէին . պատմի մասին մահու մատնուած չէին որ իւրեանց մեղքերը քահէին, ապա ինչո՞ւ նոցա չլսեցին խտտապարանոց ու ծանրասիրտ ազգըն . ինչո՞ւ նոցա քարացած սրտի վերայ ներգործութիւն չունեցաւ մարգարեից եւ քահանայապետից համոզմունքն ու խրատները . ինչո՞ւ փոխանակ երախտագետ լինելու . նոցա, հալածեցին քարկոծեցին եւ սպանեցին . ուրեմն սուտ է Պ. Սիմեոնեանցի ասութիւնը քե , Հրեշտակները զալուց յետոյ վերացաւ երկպառակութիւնը, եւ հաստատուեցաւ խաղաղութիւնը :

Վերի զրաճները էին հին օրինաց ժամանակի մարդիկ . այժմ կամենումնք հարցանել Պ. Սիմեոնեանցիցը՝ Բրիստոսից յետոյ եկած մարդկերանց մասին, քե ինչպէս մարդ էր Պողոս առաքեալը, Աբանասը, Կիւրեղ՝ Երուսաղեմայ Հայրապետը, Կիւրեղ Աղեքսանդրացին, Գրիգոր աստուածաբանը, Յօնան Ոսկերեւանը, մեր սուրբ Վրբանէսը, Ռեստակէսը, սուրբ Յուսիկը, Գրիգորիս՝ Աղուանից Կաթողիկոսը, Յակոբ՝ Մծրնայ Հայրապետը, Մեծն Ներսէսը, սուրբ Սահակ Հայրապետը, ու սուրբ Ղեւոնդեանք քահանայքը, եւ այլն, եւ այլն, եւ այլն . . . Սոքա կարծեմ սրբազան զգեստների տակը բռնով լիքը անօրներ չունէին . հիւսիս ու հարաւ զնալու, ու իրենց անցեալ մեղքերը քահելու հարկաւորութիւն չունէին . այլ ընդ հակառակն ընտիր ու պատուական՝ աստուածամանոյ եւ իմաստուն մարդիկ էին, եւ մարդկերանց խաղաղութիւնը միաբանութիւնը համոզող ու ցանկացող էին . ապա ինչո՞ւ Պողոս առաքելոյ համոզմանցը ու քարոզութեանը չլսեցին Հրեից խռովները, այլ բազմութեամբ Ազրիպպասի առաջը կանգնած Պողոսի արեանը ծաքաւած, ուխտ էին դրած՝ չուտն չըմպն մինչեւ Պողոսին սպանեն :

Աբանասի ու Կիւրի Հայրապետների սքանչելի համոզմանցը ինչո՞ւ չլսեցին արիոսականները, ու չզաղարեցին իրանց մէջի սոսկալի երկպառակութիւնը, մինչեւ որ մէկին իՍպանիա, ու մէկին Կիւիլիկա աքսոր քշեցին : Կիւրի Աղեքսանդրացւոյն, Գրիգոր աստուածաբանի ու Յօնան Ոսկերեւանի համոզմանցը ինչո՞ւ չլսեցին եւ ժամանակի մարդիկներն, որ երկուսը արո՞ւից ձգած, ու միւսն աքսոր հալածեցին : Սուրբ Ռատակիսի համոզմանցը ինչո՞ւ չլսեց Արքեղայոս՝ Ծովից իշխանը, այլ սրով նոյն գաւառի մէջը սպանեց : Սանատրուկի՝ Աղուանից բազաւորն ու իրան մոլեռանդ ժողովուրդը ինչո՞ւ չլսեցին Գրիգորիսի Աղուանից Կաթողիկոսի խրատներն ու համոզմունքը, որ ձիւ ազուց կապած Վատնեան դաշտի մէջը սպանեցին : Մանա՞հիր Ռշտունեաց անգութ իշխանը, ինչո՞ւ սուրբ Յակոբ հայրապետի համոզմանցը չլսելով՝ ծովի մէջը խեղդեց նորա սարկաւազներն : Տիրան բազաւորը ինչո՞ւ սրբոյն Յուսկան համոզմանցը անլուր գտաւ, ու նորան սպանեց : Պապ Բազաւորը ինչո՞ւ սուրբ Ներսէս Հայրապետի խրատներն անարգեց, ու ինքն սարսափելի մեղքի մէջը քաւալուած՝ մահուան բռնով զՀայրապետն սպանեց : Ապերախտ ու տիրանեղ իշխաններն ինչո՞ւ սուրբ Սահակի խրատներն ու համոզմունքներն անարգելով՝ իրան արո՞ւից ձգեցին, ու Հայոց բազաւորութիւնը կործանեցին : Սրբոց Ղեւոնդեանց անզոյգ քահանայից սքանչելի համոզմունքը ինչո՞ւ չկարացին ուրացնել Վասակին դարձրել իրան չար ճանապարհիցը, որ չլինէր պատճառ այնքան աշխարհաւեր կործանմանցը :

Էս տեղ անշուշտ պիտի Պ. Սիմեոնեանցն պաշարուի, ու այս երկու խօսքիցը մէկը անպատճառ պիտի ընդունի : Կամ պիտի ընդունի որ հաւատը, յոյսը եւ սէրը, այս 1862 ամի մայիս ամսին եւ եկած, ու Աղամիցն սկսած միւրեւ ցայսօր որքան ականաւոր ու ընտիր մարդիկ ծնուած էին յաշխարհիս, չէին ունեցած ոչ հաւատ, ոչ յոյս եւ ոչ սէր . եւ կամ պիտի ընդունի որ այդ երեք առաքինութիւնները մարդկութեան հետ ծնուած են : Բայց ափսոս որ չեն ունեցած ներգործութիւն խաբերայ, խարդախամիտ, խռովարար, քսու, ազան, շաղակրատ, պոռոտախօս, զրպարտիչ, ստախօս, դիմակաւոր, կեղծ ազգասէր, Աստուծոյ շնորքիցն օտարացած, Աստուծոյ երկիւղիցը ու մարդկերանց աւօրեից զրկուած մարդկանց վերայն : Մարդիկը չեն կարողացել մտնել էդ առաքինութեան դրօշակի տակը, ինչպէս որ Աստուած ինքն է զանգատում քե . Այգի տնկեցի, ցանկով պատեցի, ձողարարձ զարդարեցի, գութ հնձան փորեցի ինձա, եւ մնացի քե բերցի խաղող եւ երբեք ինձ փուշ : Ուրեմն մեղաւոր չէ սերմանացանը . զի նա միօրինակ է սերմանում . բայց մէկի սիրտը ապառամ, միւսինը ճանապարհ, ու միւսինը փուշ ու տատասկ . բարի ու պատուական պտուղներից գութը եւ մնում :

Կմնայ միւս բանը որ կասե՝ քե Աստուած ողորմեցաւ, այն անձինքները մէկը հիւսիս, մէկը հարաւ եւ միւսը մահու մատնեց, որ զնան իւրեանց մեղքերը ողբան : Երջանիկ էին մեր երանելի նախնիքը, որ Սիմեոնեանցը այն ժամանակը չէր ծնած . ապա քե ոչ՝ առանց վախճանը նայելու Սիւնեաց Վասակին, Սուրմակ, Բրիչիոյ եւ Շմուէլ կաթողիկոսացը, Մեհրութանին ու միւս ուրացող իշխանացը մինչի երկինքը պիտի բարձրացներ, որովհետեւ նոցա մարմնաւոր եւ անցաւոր փառօք բարձրացած կտեսներ Սուրմակ, Շմուէլ, ու միւս կաթողիկոսացը Լուսաւորչու Գանին վրայ բազմած . իսկ Վարդանին իւր աստուածասէր զօրավարաց հետ Աւարայրի դաշտին մէջ արինաբարախ փռուած . սուրբ Սահակ Հայրապետը Արոտէն ձգած դէպի հարաւ հալածուած, ու սուրբ Ղեւոնդեանքը ընդ երեսելի նախարարացը դէպի Թուսաստան աքսորած . եւ ժամանակը այս անուղիղ դատաստանաւ պիտի դատեր նոցա :

Տեսա՞ր, Պ. Սիմեոնեանց, քե քո անխորհուրդ խորհրդածութիւնը որքան հեռու է ողջամիտ դատողութիւնից . տեսա՞ր քե որքան սուտ եւ ընդունայն են ձեր անհիմն կարծիքը :

Տես, դու հարաւ եւ հիւսիս հեռացնելով կկարծես քե բանաւոր այգիքը պիտի ծաղկին խաղաղութեամբ . բայց քու ներհակը Սողոմոն իմաստունը կզոչէ ասելով . « Արի հիւսիս եւ եկ հարաւ, շնչեմ իպարտեզ իմ, եւ բուրեցցին խոսնկը իմ » . այժմ ում հաւատանք, քեք քե Սողոմոնին . ուր մնայ քե հարաւ ու հիւսիս հեռանալով՝ այգիք չեն ծաղկիր, այլ նոյն Սողոմոնի միւս խօսքերն լսելով հարկաւոր է այգի ապականող փոքր աղուէսները հալածել, ինչպէս որ կասե . « Կալարուք զաղուեսունս փոքունս ապականիչս այգեաց, զի այգիք մեր ծաղկեցցին » . բայց այս եւս կարծեմ ձեզ վնասակար կբուի, ու ձեր պատուին կզպչի . վասն որոյ չէք համաձայնել :

Վերջապէս ձեզ խորհուրդ կտամ իբր բարեկամ, քե որքան կամիք խօսել՝ խօսե՛ք, բայց զրիչ ձեռք առած ժամանակը ձանր խորհուրդներից հեռի կացե՛ք . ապա քե ոչ՝ ձեր հոգւոյ կարողութիւնը, որ բանձր վարագուրով ծածկուած է, բոլորովին յայտնի կանուէք ու ծաղր ու ծանակ կլինիք :